

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԴԱՇՏԱԴԵՄ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ**

Հաստատվել է՝ Դաշտադեմ համայնքի ավագանու 22.12.2016թ թիվ_26-Ն որոշմամբ

ԴԱՇՏԱԴԵՄ 2017թ.

Բովանդակություն

1. Համայնքի ղեկավարի ողջունիխոսք	3
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն	5
2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն	5
2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը	6
2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը	7
2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները 7	
2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ	8
2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն	11
3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում	12
3.1. Համայնքի զարգացման տեսլական	12
3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ	13
4. ՀԶԾ ֆինանսավորում	17
5. ՀԶԾ մոնիթորինգ	17

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք

Հարգելի համագյուղացիներ

Ձեզ եմ ներկայացնում Դաշտադեմ համայնքի զարգացման ծրագիրը: Համայնքի զարգացման ծրագիրը համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ է, որը ենթադրում է համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծում և համայնքի տեսլականի իրականացում:

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դաշտադեմ համայնքի 2017-2021թթ. զարգացման ծրագրի ընդունման նպատակն է սահմանել համայնքի տեսլականը 2021 թվականին, այդ տեսլականին հասնելու ռազմավարությունը և հիմնական նպատակները: Համայնքի զարգացման ծրագիրը մշակելիս հաշվի են առնվել համայնքի առկա ռեսուրսները (ակտիվները), պարտավորությունները, տեղական առանձնահատկությունները, երկրի տնտեսական և քաղաքական առկա իրավիճակը, ինչպես նաև առաջիկա զարգացումների կանխատեսումները: Զարգացման ռազմավարության և գերակայությունների սահմանման ժամանակ ցուցաբերվել է ինտեգրացված մոտեցում (տնտեսական, սոցիալական, շրջակա միջավայրի և այլ գործոններ):

Համայնքի զարգացման ծրագիրն իր մեջ ներառում է համայնքի իրավիճակի բնութագիրը, վերլուծությունը և գնահատումը, համայնքի տեսլականը, ռազմավարության և ՀԶԾ-ի հիմնական նպատակների սահմանումը, նախատեսվող հանրապետական և մարզային, միջհամայնքային համագործակցության և այլ ծրագրերը, ֆինանսական իրավիճակի վերլուծությունը, գնահատումը և կանխատեսումը, ոլորտային ծրագրերը, գույքի կառավարման ծրագիրը, զարգացման ծրագրի մոնիթորինգը:

Համայնքի հիմնական պրոբլեմներն են՝ Համայնքի բնակչության մի մասը գտնվում են սոցիալապես վատ պայմաններում: Համայնքում առկա է զանազան հիվանդությունների վտանգ: Գյուղացիները գտնվում են սոցիալապես վատ պայմաններում, քանի որ՝

ա/ հաճախակի են լինում երաշտի տարիներ, որից գյուղացիները կորցնում են բերքի 50%-ը,

բ/ նրանք բավարարված չեն ոռոգման ջրով, իսկ նրանց ապրուստի հիմնական միջոցն ստացվում է անասնապահությունից,

գ/ Գործազրկության պատճառով երիտասարդները մեկնում են արտագնա աշխատանքների:

Համայնքում առկա է զանազան հիվանդությունների վտանգ, քանի որ՝

ա/ խմելու ջրի մանրէազերծում և ֆիլտրում չի կատարվում,

բ/ վտանգ կա, որ կեղտաջրերը կարող են խառնվել խմելու ջրին,

գ/ կենցաղային աղբահեռացում չի կատարվում:

Ծրագրի նախագծի հիմք է հանդիսացել համայնքի ղեկավարի նախընտրական ծրագիրը:

Ծրագրի մշակմանը մասնակցել են համայնքապետարանի աշխատակազմի բոլոր ստորաբաժանումները և համայնքի ավագանին, քննարկվելու հաշվի են առնվել հանրային լսումների արդյունքում կատարված բոլոր առաջարկությունները: Ծրագիրը հաստատվել է համայնքի ավագանու անդամների կողմից:

2. Համայնքի իրավիճակի նկարագրություն

2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն

3. Դաշտադեմ գյուղը նախկինում ունեցել է Իլմազու անվանումը , իսկ Դաշտադեմ վերանվանվել է 1991թ-ին: Դաշտադեմ գյուղը մինչև 1988թթ բնակեցված է եղել Ադրբեջանցիներով :Ղարաբաղյան իրադարձություններից հետո վերաբնակեցվեց, Բաքվից , Շամախից, Կիրովաբադից և Շահումյանից գախթաց այդ թվում նաև Վրաստանի Ախլալակի և Բոգդանովկայի շրջաններից տեղափոխված հայերից և հարևան համայնքներից եկած բնակիչներից :Գյուղը գտնվում է Տաշիր քաղաքից 10-կմ դեպի արևմուտք, իսկ մարզկենտրոնից 62կմ հեռավորության վրա:Մինչև 1991-1992թթ գյուղը ուներ 320 տնտեսություն, այսօր գյուղում կա ընդամենը 46 տանիք, որից բնակեցված է 31-ը: Բարձրությունը ծովի մակարդակից 1650 մետր:Կլիման բարեխառն է, ձմեռը ցրտաշունչ, ամառը զով:Հաճախ են երկարատև անձրևները և կարկտահարությունը, որի պատճառով շատ են տուժվում գյուղատնտեսությամբ և անասնապահությամբ զբաղվող գյուղացիները:

Համայնքի բնակչության թիվը կազմում է 130 մարդ, այդ թվում տղամարդիկ՝ 67 և կանայք՝ 63: Բնակչության տարիքային և սոցիալական կազմն այսպիսին է՝

- 0-6 տարեկան -14 մարդ
- 7-17 տարեկան – 14 մարդ
- 18-63 տարեկան – 99 մարդ
- 64 և ավելի տարեկան – 3 մարդ
- կենսաթոշակատուների թիվը – 5 , այդ թվում տարիքային և աշխատանքային թոշակատուներ՝ 5 մարդ
- հաշմանդամներ - 2 մարդ, այդ թվում մանկուց հաշմանդամներ՝ 2 մարդ
- միակողմանի ծնողազուրկ երեխաներ – 1 մարդ
- աշխատունակներ – 98 մարդ
- զբաղվածներ – 98 մարդ
- գործազուրկներ – 82 մարդ, այդ թվում գրանցված՝ 0 մարդ, չգրանցված՝ 82 մարդ
- տնային տնտեսությունների թիվը – 31
- ընտանիքների թիվը - 31
- ընտանեկան նպաստի պետական համակարգում հաշվառված ընտանիքների թիվը – 8 , այդ թվում նպաստառու ընտանիքների թիվը՝ 8:

3.1. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը

- Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն կազմում է 6.5932 մլն դրամ:
- Ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը կազմում է 2,6161 մլն դրամ (39,7%),
- Աղյուսակում բերված են համայնքի հիմնական գյուղատնտեսական արտադրանքը և ծավալները 2016թ.

Գյուղատնտեսական արտադրանքի տեսակը	Ցանքատարածության չափը	Արտադրանքի քանակը
կարտոֆիլ	2.5հա	180տ
կաղամբ	0.1հա	10տ
բանջարեղեն	0.4հա	26տ
միս		10տ
բուրդ		1տ
ձու		2հազ.հատ
մեղր		0.5տ

Անասունների տեսակը	Գլխաքանակը
Խոշոր եղջերավոր անասուններ	353
Այդ թվում կովեր	160
Մանր եղջերավոր անասուններ	392
Այդ թվում մայրեր	278
խոզեր	39
Այդ թվում մայրեր	-
թռչուններ	314
Այդ թվում հավեր	239
մեղվաբնտանիքներ	84

- Համայնքում գործում է միջնակարգ դպրոց, որտեղ սովորում են 14 աշակերտ:

Դպրոցն ունի 15 աշխատող:

Բուժ-ամբուլատորիայում աշխատում են 1 աշխատողներ:

- Ընտանեկան նպաստների համակարգում գրանցված են 8 ընտանիքներ,
- Համայնքում գործազրկության մակարդակը կազմում է 83,6%:

3.2. Համայնքում իրականացվող ծրագրերը

- Համայնքային նոր կենտրոնի կառուցում:
- Ներհամայնքային ճանապարհների և փողոցների նորոգում և բարեկարգում
- Ներհամայնքային ճանապարհների և փողոցների արտաքին լուսավորության համակարգի անցկացում

Պետության կողմից իրականացվող միջոցառումները խթանում են համայնքի երեխաների կրթության զարգացմանը:

Միջազգային կազմակերպությունների ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերի պարագայում կմեծանա երեխաների ակտիվությունը, ճանաչողությունը և ապագայում նրանց մասնակցությունը համայնքային խնդիրների լուծմանը:

3.3. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները

N	Եկամուտի տեսակը	2017	2018	2019	2020	2021
	Ընդամենը եկամուտներ	7.581912 մլն	7.581912 մլն	7.581912 մլն	7.581912 մլն	7.581912 մլն
Ա	Հարկային եկամուտներ	3.81912 մլն	3.81912 մլն	3.81912 մլն	3.81912 մլն	3.81912 մլն
1	Հողի հարկ	2,3597 մլն	2,3597 մլն	2,3597 մլն	2,3597 մլն	2,3597 մլն
2	Գույքահարկ	0,716 մլն	0,725 մլն	0,735 մլն	0.745 մլն	0.755 մլն
3	Եկամտահարկ					
4	Այլ հարկային եկամուտներ					
Բ	Տուրքեր					
1	Պետական տուրքեր					
2	Տեղական տուրքեր	0,0	10 հազ	10 հազ	10 հազ	10 հազ
Գ	Ոչ հարկային եկամուտներ					
1	Վարձավճարներ	1,0 մլն	1,0 մլն	1,0 մլն	1,0 մլն	1,0 մլն
3	Տեղական վճարներ					
4	Այլ ոչ հարկային եկամուտներ					

Դ	Դոտացիա	3,5 մլն	3,5 մլն	3,5 մլն	3,5 մլն	3,5 մլն
Ե	Եկամուտներ կապիտալ գործառնություններից					
Զ	Տարեսկզբի ազատ մնացորդ					

3.4. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

Դաշտադեմ համայնքի առջև ծառայած ընդհանուր հիմնական խնդիրներն են՝

Համայնքի բնակչության 70%-ը գտնվում են սոցիալապես վատ պայմաններում: Համայնքում առկա է զանազան հիվանդությունների վտանգ: Համայնքի զարգացման հիմնական խոչընդոտող գործոններն ու դժվարությունները նշված են ստորև.

1) Գործարար միջավայրի բարելավմանը և ձեռնարկատիրության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

.Ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման դժվարությունը,

.բնակչության գործարար ոլորտի գիտելիքների պակասը,

.ֆինանսի բացակայությունը

.Համայնքի գույքի կառավարման խոչընդոտներն են՝

.Ֆինանսական սղությունը,

2) Երիտասարդության ներգրավմամբ ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպման խոչընդոտող գործոններն են՝

.մշակութային կյանքի պասիվությունը,.

3) Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությանը խոչընդոտող գործոններ են՝

.գործազրկությունը,

. համայնքում զազաֆիկացման բացակայությունը

„խմելու ջրի անորակությունը/մանրէազերծման, ֆիլտրման բացակայությունը/,

.խմելու ջրի անհավասարաչափ բաշխումը,

4) Ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսմանը խոչընդոտող գործոններն են՝

.սպորտ հրապարակ, մարզադահլիճ և մարզագույք չունենալը,

5) Համայնքում բնակարանային շինարարության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝
.համայնքաբնակների աղքատությունը,

6) Համայնքի բնակավայրերի կառուցապատմանը, բարեկարգմանը և կանաչապատմանը, համայնքի աղբահանությանը և սանիտարական մաքրմանը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովմանը, ինչպես նաև համայնքային զերեզմանատների պահպանմանը և գործունեության ապահովմանը խոչընդոտող գործոններն են՝

- .ջրմուղ-կոյուղու բացակայությունը,
- .խմելու ջրագծի և ջրի ներքին ցանցի քայքայված վիճակը,
- .միջոցների սղությունը,
- .փողոցային լուսավորության բացակայությունը:

7) Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպմանը, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանմանը և շահագործմանը խոչընդոտող գործոններն են՝

- .միջհամայնքային, ներհամայնքային և դաշտափջյան ճանապարհների քայքայված վիճակը,
- .հանրային տրանսպորտի բացակայությունը,
- .կանգառների բացակայությունը,
- .ճանապարհային նշանների բացակայությունը

8) Աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացմանը խոչընդոտող գործոններն են՝

- .քաղաքացիական պաշտպանության գիտելիքների պակասը,
- .սեյսմիկ գոտում գտնվելը,
- .աղետներին պատրաստվածության ծրագրի բացակայությունը,
- .համայնքաբնակները պատրաստ չեն համապատասխան քայլերի դիմել վերահաս և փաստացի վտանգի դեպքում:

9) Գյուղատնտեսության զարգացման խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

- .ռոռզման ցանցի բացակայությունը,
- .որակյալ սերմի բացակայությունը,
- .սպառման շուկայի դժվար հասանելիությունը,
- .գլխավոր մայրուղուց հեռու լինելը:

10) Համայնքում շրջակա միջավայրի պահպանությանը խոչընդոտող գործոններն են՝

- .հեղեղատարների բացակայությունը,
- .աղբահեռացում չկազմակերպելը,

11) Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպմանը խոչընդոտող գործոններն են՝

- .գործարար միջավայրի բացակայությունը,
- .ձեռնարկությունների բացակայությունը,
- .երիտասարդների միգրացիան,

12) Համայնքում ծնելիության բազմազավակության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

- .երիտասարդների չամուսնանալը,

.երիտասարդ ընտանիքների սոցիալապես պաշտպանված չլինելը,
.պետության կողմից աջակցության պակասը, աղքատությունը,

13) Համայնքում բնակչության առողջության պահպանմանն արելավման ծրագրերի իրականացմանը,
արդյունավետ մատչելի բժշկական սպասարկման պայմաններին ստեղծմանը խոչընդոտող գործոններն են՝

.բնակչության իրազեկվածության պակասը, բուժ-գործիքների պակասը, նեղ մասնագիտությամբ բժիշկների համայնքներ չհաճախելը, անվճար բուժ սպասարկման քիչ լինելը, ջեռուցման բացակայությունը

14) Համայնքային հասարակական կյանքի նախաձեռնումների մասնակցության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

.համայնքում համապատասխան պայմաններ չունենալը,

15) Համայնքում առկա ազգային համամարդկային արժեքների նյութաբանչյուրի ազատ հարողակցմանը նպաստելուն խոչընդոտող գործոններն են՝

.հեռահաղորդակցման տեխնոլոգիաների գիտելիքների պակասը,

.ինտերնետ կապի անորակությունը,

.տեխնոլոգիաների անհասանելիությունը որոշ ընտանիքներին,

16) Համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև հրանց ֆինանսական անկախության ապահովմանն պատկուվ արել գործության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

.համայնքի երիտասարդների կամավորության պակասը,

.հանրային համախմբվածության և մասնակցության թույլ լինելը,

.տեղեկատվական տեխնոլոգիաներին չտիրապետելը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԸ ԾՆՈՂ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Գյուղացիները գտնվում են սոցիալապես վատ պայմաններում, քանի որ՝

ա/ հաճախակի են լինում երաշտի տարիներ, որից գյուղացիները կորցնում են բերքի 50%-ը,

բ/ նրանց ապրուստի հիմնական միջոցն ստացվում է անասնապահության միջոցով

գ/ հնարավորություն չունեն որակյալ սերմեր և վառելանյութ ձեռք բերելու,

դ/ գյուղացին համայնքի պրոբլեմները իր սեփականը չի համարում,

ե/ գյուղացին չի կարողանում իրացնել իր արտադրանքը,

զ/ գյուղացին չի կարողանում կատարել իր հարկային պարտավորությունները

է/ Գործազրկության պատճառով երիտասարդները մեկնում են արտագնա աշխատանքների: Համայնքում առկա է զանազան հիվանդությունների վտանգ, քանի որ`

ա/ խմելու ջրի մանրէազերծում և ֆիլտրում չի կատարվում,

բ/ վտանգ կա, որ կեղտաջրերը կարող են խառնվել խմելու ջրին,

գ/ ջուրը հավասարաչափ չի բաշխված, ուստի բնակչության մի մասը հաճախ զրկվում են ջրից,

դ/ կենցաղային աղբահեռացում չի կատարվում:

3.5. Համայնքի ուժեղությունների, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւՄԾՀՄ) վերլուծություն

<i>Համայնքի ուժեղ կողմեր</i>	<i>Համայնքի թույլ կողմեր</i>
<p>.Միջնակարգ դպրոցի առկայություն</p> <ul style="list-style-type: none"> • համայնքի պահուստային հողերի և արոտավայրի առկայությունը <p>.Ողակի ընտրությամբ ղեկավար ընտրելու հնարավորություն</p> <ul style="list-style-type: none"> • գյուղտեխնիկայի առկայություն • կաթի վերամշակման արտադրամասի հնարավորություն 	<ul style="list-style-type: none"> • . Գյուղապետարանի շենքի և համայնքային կենտրոնի բացակայությունը • Ներհամայնքային ճանապարհների և փողոցների անբարեկարգ վիճակը • Համայնքում արտաքին (գիշերային) լուսավորության համակարգի բացակայությունը • Մշակույթի տան բացակայությունը • Ջրահեռացման ներհամայնքային կենտրոնացված համակարգի բացակայությունը • Համայնքում աղբահանության ծառայության կազմակերպման փոքր մասշտաբը և ցածր մակարդակը • Ոռոգման ներհամայնքային համակարգի բացակայությունը • Միջհամայնքային հասարակական տրանսպորտի բացակայությունը` ապահովելու մշտական հաղորդակցություն մարզկենտրոնի, տարածաշրջանային կենտրոնի` Տաշիր քաղաքի հետ • Համայնքում արտադրված գյուղատնտեսական մթերքներն իրացնելու, մինչև շուկա հասցնելու բազմաբնույթ խնդիրների ու դժվարությունների առկայությունը

	<ul style="list-style-type: none"> • Համայնքում աշխատատեղերի խիստ պակասը, գործազրկության բարձր մակարդակը • Համայնքում սոցիալապես խոցելի ընտանիքների մեծ քանակը • Համայնքի գերեզմանատան չցանկապատված լինելը <p>Չունի գազաֆիկացման համակարգ.</p>
<i>Հնարավորություններ</i>	<i>Սպառնալիքներ</i>
<p>.Խմելու ջրի պաշարի առկայություն</p> <p>.կաթի վերամշակում</p> <p>.ձկնաբուծություն</p> <p>.անասնապահության</p>	<p>.Տարերային աղետների վտանգ</p> <p>.Գյուղ. մթերքների գների նվազում</p> <p>.Գյուղատնտեսական մթերքների արտահանման դժվարություն</p> <p>.Սպառման շուկաների դժվար հասանելիություն</p> <p>.Տրանսպորտային հանգույցների դժվար հասանելիություն</p> <p>.Խիստ կլիմա /ցրտահարություն/</p> <p>.Արտագաղթ. Հիվանդությունների առաջացման վտանգ</p>

4. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

4.1. Համայնքի զարգացման տեսլական

Համայնքի զարգացման տեսլականն է՝

Ունենալ զարգացած և հզոր համայնք, որտեղ առկա են ձեռնարկություններ, և մարդիկ ապրում են արժանապատիվ կյանքով:

- Համայնքի ուժեղ կողմերի և միկրո-հնարավորությունների վրա հիմնված վեր հանել համայնքի խնդիրները, և խոչընդոտները հաղթահարելով՝ ապահովել կայուն, շարունակական զարգացում ու հզորացում:
- Հետևողականորեն բարեփոխումներ կատարելու միջոցով բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, համայնքը դարձնել զարգացած, գեղեցիկ և բարեկարգ:
- Բարեփոխումներ կատարելով նախատեսվում է հասնել հետևյալ նպատակներին.
- Գյուղացիներին ապահովել մաքուր խմելու ջրով,
- Զարգացնել բուսաբուծությունն ու անասնաբուծությունը
- Ակտիվացնել բնակչության մշակութային կյանքը,
- Կազմակերպել համայնքաբնակների հանգիստը

- Ապահովել բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների նորմալ և անվտանգ երթևեկությունը:
- Համայնքի սեփական տարեկան եկամուտները հասցնել 30%-ով աճի,
- Համայնքում գրանցված բնակիչների թվի աճը նախորդ տարվա համեմատ հասցնել 2%-ով աճի:

4.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ

- 1) Գործարար միջավայրը բարելավել և ձեռնարկատիրությունը խթանել:
- 2) Համայնքի գույքը կառավարել:
- 3) դպրոցական կրթությունը և արտադպրոցական դաստիարակությունը կազմակերպել:
- 4) Ակտիվ մշակութային և մարզական կյանքն ակտիվացնել՝ երիտասարդության ներգրավմամբ:
- 5) Բարելավել համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը:
- 6) Ապահովել ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսումը:
- 7) Համայնքում բնակարանային շինարարությունը խթանել:
- 8) Ապահովել համայնքի բնակավայրերի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը: Կազմակերպել համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը: Կոմունալ տնտեսության աշխատանքներն ապահովել, ինչպես նաև համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապահովումը կազմակերպել:
- 9) Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքը կազմակերպել, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանումը և շահագործումը կազմակերպել:
- 10) Աջակցել պետության պաշտպանության իրականացման հարցում:
- 11) Իրականացնել աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումները:
- 12) Գյուղատնտեսության զարգացումը խթանել:
- 13) Կազմակերպել համայնքում շրջակա միջավայրի պահպանությունը:
- 14) Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպումն ապահովել:
- 15) Համայնքում ծնելիությունը և բազմազավակությունը խթանել:
- 16) Ապահովել համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացումը, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծումը:
- 17) Համայնքային հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցությունը խթանել:

- 18) Համայնքում առկա ազգային և համամարդկային արժեքներին յուրաքանչյուրի ազատ հաղորդակցմանը նպաստել:
- 19) Բարեգործությունը խթանել՝ համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով:

Ծրագիր 1

Տնտեսական հարաբերություններ. քաղաքաշինություն

(Ոլորտի անվանումը)

Համայնքային նոր կենտրոնի կառուցում

(Ծրագրի անվանումը)

Դաշտադեմ համայնքի գյուղապետարան

(Ծրագրի հայտը ներկայացնող կազմակերպությունը, ստորաբաժանումը կամ խումբը)

Ծրագրի ընդհանուր արժեքը՝ 20,000.0 հազար դրամ

Ծրագրի տեսակը կամ գնվող ապրանքը

- Ծառայությունների մատուցում Սպասարկում Ընթացիկ աշխատանքներ
 Վերանորոգում Վերականգնում Ընդլայնում Փոխարինում **Նորը** Այլ

Ծրագրի հիմնավորումը

Համայնքը չունի գյուղապետարան, գրադարան, բուժկետ և <Հայփոստի> բաժանմունք՝ որի պայմանները չեն համապատասխանում նշված հիմնարկների գործունեության բնույթին և պահանջներին: Համայնքում չկա նաև մշակույթի տուն, որի պատճառով բնակչության մշակութային կյանքը, կարելի է ասել, սառեցված վիճակում է: Համայնքի կենտրոնում անհրաժեշտ է կառուցել

համայնքային նոր կենտրոն, որտեղ հնարավոր կլինեք տեղափոխել վերոնշյալ հիմնարկները, ինչպես նաև ստեղծել մշակութային տարբեր խմբեր ու խմբակներ, կազմակերպել և անցկացնել հասարակական և մշակութային տարբեր բնույթի հանրային ծառայություններ ու միջոցառումներ:

Ծրագրի նպատակները

Բարձրացնել համայնքի բնակչությանը հանրային ծառայությունների մատուցման մակարդակը, ակտիվացնել համայնքի բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը, աշխուժացնել համայնքի հասարակական և մշակութային կյանքը:

Ծրագրի խնդիրները

1. Ձեռք բերել ՀՀ Լոռու մարզպետարանի միջնորդությունը և ՀՀ կառավարության համաձայնությունը՝ ծրագիրը ներառելու ՀՀ 2017թ. պետական բյուջեի նախագծում:
2. Համայնքի կողմից պատվիրել և ստանալ համայնքային նոր կենտրոնի կառուցման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը:

Վերահսկել համայնքային նոր կենտրոնի կառուցումը և հանձնումը համայնքի հաշվեկշռին

Ծրագիր 2

Տնտեսական հարաբերություններ. Ճանապարհային տնտեսություն

(Ոլորտի անվանումը)

Ներհամայնքային ճանապարհների և փողոցների նորոգում և բարեկարգում

(Ծրագրի անվանումը)

Դաշտադեմ համայնքի գյուղապետարան

(Ծրագրի հայտը ներկայացնող կազմակերպությունը, ստորաբաժանումը կամ խումբը)

Ծրագրի ընդհանուր արժեքը՝ 3,000.0 հազար դրամ

Ծրագրի տեսակը կամ գնվող ապրանքը

- Ծառայությունների մատուցում Սպասարկում Ընթացիկ աշխատանքներ
 Վերանորոգում Վերականգնում Ընդլայնում Փոխարինում Նորը Այլ

Ծրագրի հիմնավորումը

Համայնքի ներհամայնքային փողոցները կարիք ունեն լուրջ վերանորոգման ու բարեկարգման:

Համայնքում շահագործվում են 18 մարդատար մասնավոր ավտոմեքենաներ, որոնք մշտապես երթևեկում են ներհամայնքային անբարեկարգ փողոցներով, ժամանակի ընթացքում շարքից դուրս են գալիս և դառնում շահագործման համար ոչ պիտանի: Անբարեկարգ փողոցները ստեղծում են լրացուցիչ ղժվարություններ ու անհարմարություններ նաև հետիոտների համար:

Ծրագրի նպատակները

Ներհամայնքային կենտրոնական փողոցները բերել բարեկարգ վիճակի՝ վերացնելով փողոցների ջրափոսերը և դրանք դարձնելով անցանելի ու հարմարավետ հետիոտների և տրանսպորտային միջոցների երթևեկության համար տարվա բոլոր եղանակներին:

Ծրագրի խնդիրները

1. Ներհամայնքային կենտրոնական փողոցների որոշ հատվածների հողային, խճապատման և բարեկարգման աշխատանքների իրականացումը նախատեսել 2017-18թթ. ընթացքում:
2. Համայնքի 2017-18թթ. բյուջեներում նախատեսել 1000.0 - հազարական դրամ գումար:
3. Մինչև 2017-18թթ. յուրաքանչյուր տարվա հուլիսի 1-ը նախապատրաստել փողոցների վերանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերը և վարձակալել մասնավոր բեռնատար ավտոմեքենաներ՝ շինարարական աշխատանքներն իրականացնելու համար:
4. Մինչև 2017-18թթ. յուրաքանչյուր տարվա նոյեմբերի 1-ը իրականացնել և ավարտել ներհամայնքային փողոցների վերանորոգման և բարեկարգման աշխատանքները:

Ծրագիր 3

Տնտեսական հարաբերություններ. Ճանապարհային տնտեսություն

(Ոլորտի անվանումը)

Ներհամայնքային ճանապարհների և փողոցների արտաքին լուսավորության համակարգի անցկացում

(Ծրագրի անվանումը)

Դաշտադեմ համայնքի գյուղապետարան

(Ծրագրի հայտը ներկայացնող կազմակերպությունը, ստորաբաժանումը կամ խումբը)

Ծրագրի ընդհանուր արժեքը՝ 3,500.0 հազար դրամ

Ծրագրի տեսակը կամ գնվող ապրանքը

- Օտառությունների մատուցում Սպասարկում Ընթացիկ աշխատանքներ
 Վերանորոգում Վերականգնում Ընդլայնում Փոխարինում Նորը Այլ

Ծրագրի հիմնավորումը

Ներհամայնքային փողոցները և ճանապարհները հազեցած չեն արտաքին լուսավորության համակարգով, որը որոշակի վտանգ, անհարմարություններ ու դժվարություններ է առաջացնում հետիոտների և տրանսպորտային միջոցների համար: 2018թ. ընթացքում ներհամայնքային կենտրոնական փողոցների վերանորոգումից և բարեկարգումից հետո անհրաժեշտ է դրանք վերազինել արտաքին լուսավորության համակարգով:

Ծրագրի նպատակները

Բարձրացնել ներհամայնքային կենտրոնական փողոցներով երթևեկության անվտանգության մակարդակը՝ դարձնելով դրանք լուսավոր, գեղեցիկ ու հարմարավետ համայնքի բնակիչների, զբոսաշրջիկների և տրանսպորտային միջոցների համար:

Ծրագրի խնդիրները

1. Ձեռք բերել որևէ դոնոր կազմակերպության համաձայնությունը՝ համայնքի հետ համատեղ համաֆինանսավորելու ծրագիրը (ծրագրի արժեքի համապատասխանաբար 43% և 57% համամասնությամբ):
2. Մինչև 2018թ. մայիսի 1-ը պատվիրել և պատրաստել ներհամայնքային կենտրոնական 1-ին փողոցում միակողմանի արտաքին լուսավորության համակարգի անցկացման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերը՝ նախատեսելով 25 մետաղյա հենասյուներ՝ 4.5 մ

բարձրությամբ, 70 մմ տրամագծով, իրարից 40 մ հեռավորությամբ, յուրաքանչյուր հենասայան վրա՝ 1 լուսային սարքավորում, և էլեկտրահաղորդալարեր՝ 10 մմ հաստությամբ, 1 կմ երկարությամբ:

3. Համագործակցել և կնքել պայմանագիր <Հայաստանի էլեկտրացանցեր> ՓԲԸ <Հյուսիսային> մասնաճյուղի հետ՝ տրամադրելու փողոցների արտաքին լուսավորության համակարգի անցկացման աշխատանքներն իրականացնող մասնագիտական (տեխնիկական) խումբ:
4. Ձեռք բերել արտաքին լուսավորության համակարգի հենասայունները, լուսային սարքավորումները և էլեկտրահաղորդալարերը:
5. Իրականացնել ներհամայնքային կենտրոնական 1-ին փողոցի արտաքին լուսավորության համակարգի անցկացման աշխատանքները և մինչև 2018թ. հոկտեմբերի 1-ն այն հանձնել շահագործման:

5. ՀԶԾ ֆինանսավորում

ՀԶԾ-ում ընդգրկված ծրագրերը ֆինանսավորվելու են՝

- Համայնքի սեփական եկամուտներից,
- Ներքին պաշտոնական դրամաշնորհներից
- Արտաքին պաշտոնական դրամաշնորհներից,
- Բարեգործություն/նվիրատվություններից
- Այլ աղբյուրներից,

ՀԶԾ-ում ընդգրկված ծրագրերի իրականացման համար չկան առկա միջոցներ, նրանց համար անհրաժեշտ է գումար ապահովել:

6. ՀԶԾ մոնիթորինգ

ՀԶԾ մոնիթորինգը կիրականացվի համաձայն Մոնիթորինգի անձնագրով (Հավելված 3) սահմանված ցուցանիշների և ժամանակացույցի: